

«Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ վերաֆինանսավորմանը ներկայացվող վարկերին ներկայացվող լրացուցիչ պայմաններ

<p>Վարկառու (և նոր տրամադրվող, և վերակառուցվող (վերաֆինանսավորվող) վարկի)</p>	<p>Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի (ներառյալ բոլոր զորամասերը) շարքային, ենթասպայական և սպայական կազմը (բացառությամբ պարտադիր ժամկետային զինծառայողների)</p>
<p>Վարկի նպատակը</p>	<p>Գործող սպառողական («Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքի կարգավորմանը ենթակա վարկ, պարտավորության տարաժամկետ վճարման իրավունք, այդ թվում՝ ժամկետանց, չաշխատող վարկային պարտավորություն) վարկերի վերակառուցում</p>
<p>Վարկի գումարի մեծությունը</p>	<p>· Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կրտսեր և ավագ սպայական կազմի (լեյտենանտի զինվորական կոչումից մինչև գնդապետի զինվորական կոչում ունեցողները ներառյալ) համար՝ յուրաքանչյուր վարկառուի հաշվով առավելագույնը՝ 1.000.000 դրամ: · Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության շարքային և ենթասպայական կազմի (բացառությամբ պարտադիր ժամկետային զինծառայողների) համար՝ յուրաքանչյուր վարկառուի հաշվով առավելագույնը՝ 500.000 դրամ¹</p>
<p>Ներկայացվող լրացուցիչ փաստաթղթեր</p>	<p>Տեղեկանք ծառայության վայրից, որտեղ պարտադիր պետք է նշվեն զինվորական կոչումը և աշխատավարձի չափը, անչափահաս երեխայի(ների) ծննդյան վկայական(ներ) (առկայության դեպքում)</p>
<p>Այլ պահանջներ</p>	<p>· «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ վերաֆինանսավորման կարող են ներկայացվել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 1-ը տրամադրված վարկերի վերակառուցմանը/վերաֆինանսավորմանն ուղղված վարկերը, · Յուրաքանչյուր վարկառուի վարկերը կարող են «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ վերաֆինանսավորման ներկայացվել իրեն հասանելիք առավելագույն սահմանաչափի շրջանակներում միայն մեկ անգամ (նաև առավելագույն սահմանաչափի շրջանակներում երկու և ավելի վարկերի տեսքով):</p>

¹ Եթե վարկառուն ունի ՀՀ Կառավարության 23.05.2013թ.-ի թիվ 590-Ն Որոշմամբ հաստատված Ծրագրի շրջանակներում ստացված վարկ, ապա այդ վարկային պարտավորությունը ներառվում է սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված վարկի գումարի մեծության առավելագույն չափի մեջ, ընդ որում՝ հաշվարկում ներառվում է վարկի պայմանագրային գումարը: